ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՐԻԿ ԳԱԼԻԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԵԼ Է ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

01.03.2016 17:32



Փաստաբանների պալատի նախագահի 01.03.2016թ. թիվ 81-Ա որոշմամբ փաստաբան Գարիկ Գալիկյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման հատկանիշներով:

Փաստաբանների պալատի նախագահի որոշմանը կարող եք ծանոթանալ **այստեղ:**

Հիշյալ որոշմամբ նշվել է, որ՝

«Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:»:

«.... փաստաբան Գարիկ Գալիկյանի կամ որևէ մարդու՝ տղամարդու և կնոջ միջոցով ընտանիք կազմելու վերաբերյալ համոզմունքը կամ նույն սեռի ներկայացուցիչների ոչ բնական միության վերաբերյալ քննադատական կարծիքը պետք է հարգել՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 41-րդ և 42-րդ հոդվածների:»:

«Պալատը քննարկման առարկա է դարձնելու փաստաբան Գարիկ Գալիկյանի կողմից ենթադրաբար կատարված՝ «Երբ տեսնեմ, տրորելու եմ, ոտնատակ եմ տալու ու պետք է վառել, այո, միշտ տրորել եմ, տրորելու եմ ու գնալու եմ տենց էլ առաջ» արտահայտությունները, հրապարակային հնչեցնելու վարքագիծը (անկախ նրանից, թե ով է հանդիսանում այդ արտահայտությունների հասցեատերը):»_

Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Առաջարկվող նորություններ

12.10.2016ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՐԻԿ ԳԱԼԻԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԵԼ Է ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })